ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019թ. ապրիլի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի V դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Էքսկուրսիայի կազմակերպում:

2.Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին.- Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ դպրոցում սովորողների գեղագիտական դաստիարակությանը նպաստում է տարբեր բնույթի միջոցառումների կազմակերպումը: Ծնողխորհրդի նախագահ Լ. Պապյանն առաջարկեց կազմակերպել էքսկուրսիա Երևան: Ս. Մարտիրոսյանն առաջարկեց կազմակերպել այցելություն <<Մոսկվա>> կինոթատրոն և Ավ. Իսահակյանի անվան տուն-թանգարան: Այդ առաջարկությունները արժանացան ծնողների հավանությանը:

Որոշեցին.- Էքսկուրսիան կազմակերպել մինչև մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում, հավաքագրել 3000-ական դրամ և լուծել տրանսպորտի հետ կապված խնդիրները:

2. Լսեցին.-Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հագախումների նկատմամբ: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավերի ուշադիր լինեն իրենց երեխաների

ուսման հարցում:Պահեն ծնող- դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.-Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ

Ծնողխորհրդի նախագահ՝ /Լ. Պապյան/

Քարտուղար՝ /Լ. Թադևոսյան/